# ԿԱՐԾԻՔ

(պաշտոնական ընդդիմախոսի)

ԻԳ.00.01 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար **Բագրատ Լեռնիկի Վարդանյանի <<Կենսանվտանգության ապահովման ներպետական եվ միջազգային ընթացակարգերը Հայաստանի հանրապետությունում>>** թեմայով ատենախոսության վերաբերյալ

Բագրատ Վարդանյանի ատենախոսության թեման **արդիական է**: Հեղինակի մոտեցման հետ համաձայն ենք, ըստ որիավանդական ռազմաքաղաքական սպառնալիքներին զուգահեռ առաջնային պլան են մղվել նաև ոչ ավանդական, այդ թվում՝ կենսաբանական սպառնալիքները: Կենսանվտանգության հիմնահարցերի ուսումնասիրության արդիականությունը այս ոլորտը նեղ բժշկական կամ համաճարակաբանական տիրույթից տեղափոխել են ազգային անվտանգության և միջազգային հարաբերությունների դաշտ: Բնական գիտությունների և հատկապես կենսաբանության և բժշկագիտության ոլորտներում, գիտական նվաճումները, կարող են հեշտությամբ վերածվել զանգվածային ոչնչացման կամ թիրախային ազդեցության գործիքների: Կենսաբանական սպառնալիքները կարող են հանգեցնել հսկայական մարդկային կորուստների, իսկ նորագույն տեխնոլոգիաների հասանելիությունը հանգեցրել է նրան, որ կենսաահաբեկչությունը դարձել է շոշափելի սպառնալիք: Արդիականության հիմնավորումը առ այն, որ կենսանվտանգության հիմնահարցերը վերջնականապես ներթափանցել են միջազգային հարաբերությունների դաշտ՝ վերածվելով աշխարհաքաղաքական ազդեցության և քաղաքական ճնշում գործադրելու հզոր լծակների, լիովին արդարացված է:

Հետազոտության նպատակները՝ գիտական են և ելնում են թեմայի արդիականությունից: Ատենախոսը հասարակական-քաղաքական մտքի և հայեցակարգերի շրջանակներում գիտական պատշաճ մակարդակով ուսումնասիրել է կենսանվտանգության հասկացության բովանդակությունը, ընդգրկման շրջանակներն ու պատմական էվոլյուցիան, ժամանակակից աշխարհում կենսաբանական սպառնալիքների քաղաքական առանձնահատկություններն ու հետևանքները, կենսաէթիկական հիմնահարցերը և վերջիններիս հաղթահարման արդյունավետ ուղիները:

Հանգամանալից հետազոտվել և գնահատվել են քաղաքական ինստիտուտների դերն ու դրանց կայունության նշանակությունը կենսաբանական սպառնալիքներին արդյունավետորեն հակազդելու գործընթացում,իրականացվել է միջազգային փորձի համեմատական վերլուծություն՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ռուսաստանի Դաշնության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կենսանվտանգության համակարգերի համեմատական վերլուծությամբ: Քննության են առնվել Հայաստանի Հանրապետության կենսանվտանգության ապահովման ոլորտը կարգավորող իրավաքաղաքական միջավայրը, մարտահրավերներն ու կենսանվտանգության ապահովման ոլորտի կայացման նախադրյալները: Արժևորում եմ հատկապես այն հանգամանքը, որ հիմնավորվել է կառավարման կենտրոնացված մոդելի ներդրման անհրաժեշտությունը:

Հետազոտությունը նպատակահարմար է օգտագործել կենսանվտանգության ապահովման ոլորտում պետական քաղաքականության մշակման, պետական կառավարման մարմինների կողմից ոլորտը կարգավորող հայեցակարգային փաստաթղթերի և իրավական ակտերի մշակման, ինչպես նաև ճգնաժամային կառավարման արդյունավետ մեխանիզմների ներդրման գործընթացում: Աշխատանքում մշակված հայեցակարգային մոտեցումները, նոր սահմանումներն ու քաղաքագիտական վերլուծությունները կարող են կիրառվել նաև գիտակրթական ոլորտում՝ նախադրյալներ ստեղծելով կենսանվտանգության և կենսաքաղաքականության ուղղությամբ՝ հետագա ակադեմիական ուսումնասիրությունների համար: Աշխատանքի գիտատեսական ու կիրառական նշանակությունը խորացնում է կենսանվտանգության հիմնախնդիրների վերաբերյալ գիտական պատկերացումները, ապահովելով տվյալ ոլորտում պետական կառավարման արդիականացման և արդյունավետության բարձրացման համար:

Գաղտնիք չէ, որ ցանկացած ատենախոսության արժևորման առաջնային չափանիշը գիտական նորույթի առկայությունն է: Գիտական նորույթը առկա է: Եղած մոտեցումների և հայեցակարգերի վերլուծության հիման վրա առաջարկվել է «կենսանվտանգություն» հասկացության նոր սահմանում: Առաջադրվել են կենսանվտանգության ոլորտի որոշակի նոր մեխանիզմներ և ընթացակարգեր, որոնք ներառում են այդ դաշտը կարգավորող իրավական-կազմակերպչական և օրենսդրական աշխատանքները: Ատենախոսին հաջողվել է կոնկրետացնել իր ուսումնասիրության նպատակային լուծումները, հետազոտության հիմնախնդիրը հիմնավորվել է որպես անվտանգության ապահովման կարևոր նախադրյալ:

Հետազոտությունն ունի հարուստ գիտական և աղբյուրագիտական հենք, օգտագործվել են թեմայի ուսումնասիրության հետ կապված տեսական հիմքերն ու հիմնական աղբյուրները, ընդհանրացնող աշխատություններ, գիտական մենագրություններ, հրապարակված փաստաթղթեր: Հայաստանի և արտերկրի գիտական դիսկուրսում թեմային առընչվող քաղաքական գործընթացների շուրջ առկա մոտեցումների ուսումնասիրման նպատակով օգտագործվել են տարբեր երկրների գիտական վերլուծական հաստատությունների և ուղեղային կենտրոնների ներկայացուցիչների հետազոտական նյութերը:

Ատենախոսության մեջ առկա են նաև որոշակի թերություններ, կան բացթողումներ որոնցից ցանկանում ենք նշել երկուսը.

- Ատենախոսության մեջ նշված է, որ <<հետազոտության **օբյեկտը** ՀՀ կենսանվտանգության ապահովման ոլորտն է՝ որպես ազգային անվտանգության համակարգի բաղկացուցիչ մաս: Հետազոտության **առարկան** ՀՀ կենսանվտանգության ապահովման ոլորտի կարգավորման քաղաքական հիմքերն են, քաղաքական կառավարման արդի մեխանիզմները և գոյություն ունեցող մարտահրավերների հաղթահարման ուղիների վերահիմաստավորումը>>: Այս ձևակերպումից և ատենախոսության վերնագրից հետևում է, որ և օբյեկտը և առարկան Հայաստանի Հանրապետությանն է վերաբերվում: Սակայն հետազոտության երեք գլուխներից միայն մեկն է վերաբերվում Հայաստանին: Այն կազմում է ծավալի հազիվ երեսուն տոկոսը: Այս անհամամասնությունը անցանկալի իրողություն է և որոշակի շեղում թեմայից:

- Ատենախոսությունը հրապարակային պաշտպանության է ներկայացվել ԻԳ 00.01-«Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Մենք որոշակի անհամասնություն ենք արձանագրել նաև ատենախոսության բովանդակության և նշված մասնագիտության միջև: Հեղինակը կենտրոնացել է կենսանվտանգության ապահովման քաղաքական մեխանիզմների, կառավարման միջազգային ընթացակարգերի ու գործընթացների վրա, որն իր հերթին որոշակի շեղում է մասնագիտական շիֆրից:

Մեր դիտարկմամբ, վերը նշված դիտողությունները էականորեն չեն գցում ատենախոսության գիտական արժեքը: Ատենախոսության եզրահանգումները գիտական են և բավականին արժեքավոր Հայաստանի քաղաքական գիտությունների համար:

Ատենախոսության բոլոր հատվածներումում առկա են թարմ և արժանահավատ գնահատականներ և համեմատություններ: Ատենախոսության շարադրման լեզուն և ոճը լիովին համապատասխանում են պահանջվող մակարդակին: Աշխատանքն աչքի է ընկնում հետազոտական հիմնահարցերի շարադրման հետևողականությամբ, հմտությամբ ու տրամաբանական հաջորդականությամբ: Համապատասխան եզրահանգումներն ու սկզբունքային հիմնադրույթները հայեցակարգային բնույթի են:

Հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները, որոնք ունեն ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն:

Ելնելով վերոհիշյալ հանգամանքներից գտնում եմ, որ **ԻԳ 00.01- «Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտութունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար <<Կենսանվտանգության ապահովման ներպետական եվ միջազգային ընթացակարգերը Հայաստանի Հանրապետությունում>>** թեմայով ատենախոսությունը համապատասխանում է քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ատենախոսություններին առաջադրվող պահանջներին:

**Պաշտոնական ընդդիմախոս, քաղաքական**
**գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ---------- Գ. Քեռյան**

Քաղաքական գիտ. դոկտոր Գ. Մ. Քեռյանի ստորագրությունը հաստատում եմ

**Երևանի պետական համալսարանիգիտականքարտուղար,**

**բանասիրական գիտ. թեկնածու, Մ. Վ. Հովհաննիսյան**

**ք. Երևան**

15. 06 **2026թ.**